

№ 2 ԲԱՆՎՈՐՈՒՅՈՒՆ ՅԵՎ ԳԵՂՋԿ. ԿՈՌՈԵՐ. ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՏԵ. ՄԻԽԱՅԼԱՎ

ԱԿՏԻՎԻՍՏԱՆԵՐ

ԿՈՌՈԵՐԱՏԻՎ ՊԻՑԵՍ

— ՅԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ —

Առևելեալից ազատ Փոխազգություն
Մ. ՀՅ. ԴՐԱՅԱՆԻՆՈՒ (Փալաթզ. Մկո)

ՀՐԱՄԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՄԻ

1929


ՅԵՐԵԿԱՆ

卷之三

卷之三

卷之三

ՏԵ. ՄԻԱՅԱԼԻ



ԱԿՏԻՎԻՍՏԿԱՆԵՐ

ԿՈՌԵՐԱՏԻՎ ՊԻՑԵՍ
— ՅԵՐԵՖ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ —

Ուսուելենից ազատ Փոխադրություն
Մ. Ա. Դ. Գ. Ա. Զ. Ո. Խ. (Փալան. Մկա)

17279 A 33220

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹ

1929

ՅԵՐԵՎԱՆ



ՀԱՅՈՒՆԻԳՐԱԴԻ 1 ՏԵՄԱՐԱ
ՊԱՏՎԵՐ Խ 2165
ԳՐԱՔԵՐՎԱԿԱՐ Խ 1750 ց.
ՏԻՐԱԳ 1000

1. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ .—Կոշկակար 35 տարեկան
 2. ՍՈՆՑԱ .—Նրա կինը 25 տար .
 3. ԺԵՆՑԱ .—Կոնսուլտացիայի աշխատակից 20 տ .
 4. ԴԱՅԱԿ (Ալմաստ) .—Կոնսուլտ . դայակ 35 տ .
Խիստ գերև և հաղթաբնդամ . այրի .
 5. ՆԻՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ .—Բժշկուհի , կոնսուլտա-
ցիայի վարիչ .
 6. ՌԻԶԱՆ .—40 տարեկան .
 7. ՖԱԼՉԻ .—Պառավ վհուկ .
 8. ԴԱԼԼԱՔ .—40 տարեկան .
 9. ՏԵՐՏԵՐ .—
 10. ՑԵՐԵՔ ԿԻՆ .—Հաճախորդներ .
 11. ՄՈՒԶԻԿ , —(յերեւ չկա՝ սազանդար) :
-

BRITISH LIBRARY, LONDON
MANUSCRIPT LIBRARY, 1650

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է կոշկակարի ննջարանը, ուր միաժամանակ և տեղավորված է արհեստանոցը։ Յերկու մետրաչափ բարձրությամբ վարդգույրը բեմի լայնությամբ բաժանում է բնակարանների արհեստանոցից։ Վերջինիս համար հատկացված է քիչ մասը, իսկ բնակարանին՝ գրեթե յերեք անգամ ավելի։ Դրսի հաղորդակցության դուռը բացվում է արհեստանոցի մեջ, իսկ արհեստանոցից բնակարանը մտնում են վարագույրի մեջտեղից քողած դռնով։ Բնակարանի մեջ փողոցի վրա բացվում է մի մեծ լուսամուտ, կահավորված է մի մահնակալով, դրված պատի տակ։ Երա առջև յերկարեն որորոց, դեպի լուսամուտը, կողքին մի սեղան, մի յերկու աթոռ և մի փայտե հասարակ պահարան, անկյունում։ Արհեստանոցում պատի տակ դրված ե դազգահր, կողքին մի յերկու տարուրետներ, վրան գործիքներ, կաղապարներ և այլն։

ՏԵՍԻԼ 1-ԻՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԵՎ ՍՊՆՅԱ

(Վարագույրը բարձրանալիս, ուստա Համբարձումը նստած դազգահի առաջ, կոշիկի տակերն ե մեխում, իսկ Սոնիչկան կուցած է յերեխի որորոցի վրա)։

ՍՊՆԻՉԿԱ. — (Գուրգուրում է բարուրին) Ամա՞ն, Ժորժիկ ջան, քաղցր ջան... ինչպե՞ս տանջվում ե, ինչպե՞ս հիվանդ ե. (ծածկում է յերեսը քանօթիքով, ապա Համբարձումին) Համբի՛կ, արի յերե-

խուն որորի, յես գնամ մի վոտք ջուր բերեմ, մեկ
ել են շորերը պետք ե ութոյեմ:

ՀԱՄԲ.—Սպասիր ես զահրումարները պրծնեմ ե՛:

ՍՈՒՆ.—Դե շուտ արա՛, յես ժամանակ չունեմ.

ՀԱՄԲ.—Հիմի քո՞ւ գործն ա վոազ, թե իմը... Լավա՛
ելի՛, համ սապոժնիկություն արա, համ ել երե-
խա որորի: Եսպես վոր գնա, շաբաթը մի ջուխտ
բան չեմ կարա կարիլ:

ՍՈՒՆ.—Դե հիմի յես մեղավոր ե՞մ. շատ եմ ուրախ, վոր
ես կրակը գլխիս ա ընկե՛լ: Բա ի՞նչպես անենք:

ՀԱՄԲ.—(Տրտնջալով վեր ե կենում, մտնում ննջարա-
նը, նասում ե մահնակալի վրա, վոտքով սկսում
ե որորել, ձեռքերով ել պապիրոս փաքաքել:
Սոնյան արհեստանցից կուժը դնում ե ուսին, գը-
նում ե, Համբոն վառում ե պապիրոսը, ծխում,
միաժամանակ քուրքերեն շիքյաստա յե քոյում.
ընդհատելով յերգը, կոտանում բարուրի վրա, հետ
ե տանում քանզիֆը) Յանի սա իսան պըտի դառ-
նա՞։ նոր ծնվելիս շատ ժիր եր, ջանը՝ մ, կասես
քյահան ըներ, հիմի հիվանդ մեռնում ա՛, հենց
ենա՛, վոր շունչն ա դուրս գալի: Սա ապրողը չի,
բայց, զե ինչ արած, ծնողական պարտականու-
թյուն ա՛, քանի ձեռումս ուժ կա, պետք ա բժը-
կել տամ, ամմա ես քյոփողլու կնիկն ինձ խանգա-
րում ա. երկախս ջուրը մի առվով չի գնում ելի՛:
Են ինչ նա յա՛, ասում ա, յես ես երեխուն պետք ա
տամ կոնցոլմոնցոլա, կոնցուլտացիա ա՛, ինչ
զահրու զիսկում ա՛, վոր ենտեղ պահեն, մեծաց-
նեն, բժշկեն, յես ինչ իմանամ ել ինչ անեն:
Բայց իմի՛, գլուխս մեռել ա՛, վոր իմ երեխուն
ուրիշները պահե՞ն: Եղ ել թազա յա՛ դուրս եկել,
կոնցոլմոնցոլը վորն ա՛: Ասում ա՛ ենտեղ ել ինչ
երեխս տանում են, մկրտությունից հանում են,
խաչը գեն են գցում, անհավատ են դարձնում,
մեղա ասուր, աստված, ի՞նչ անաստված բաներ
են բռնում: Իմ երեխեն չի՞, կրժշկեմ ել, հոգի ել
(ջաբրը) կքաշեմ. հո մեռել չեմ... .

Համբո և տերտերը

ՏԵՐՏԵՐ—(Մանր ներս ե մտնում, մաշտոցը ձեռքին. տեսնելով արհեստանոցում վոչ վոճ չկա, դեռ ու դեն ե նայում, հետո ձայն տալիս) .—Ռւստա Համբարձո՞ւմ:

ՀԱՄԲ.—Են ո՞վ ա՞մ, (դուրս ե գալիս): Վա՛յ որհնա՞մ ի տե՛ր, տերտեր ջան.

ՏԵՐՏԵՐ.—Բարի վողջույն ռւստա Համբարձում, վո՞նց իս,

ՀԱՄԲ.—Փառավոր մնաս տեր հայր ջան, աջիկ զուրբան. յավ ա վոր եկել ես: Սպասում եյի, դիտե՞ս:

ՏԵՐՏԵՐ.—Դե ջուղար եյիր արել, որհնա՞ծ, վո՞նց չրդամ, ավետարանն ասմ ա՞։ «Հովիկ քաջ զանձն դնե ի վերա վոչխարաց յուրոց» . . . Բա ել վո՞ր որպա համար ենք. մեր պարտականությունն ա՞։ Հիմի ասա-տեսնե՞նք խեր ա՞։

ՀԱՄԲ.—Դե ինչ ասեմ, տերտեր ջան, խեր չելած ինչ պիտի լինի. երեխեն հիմանդ ա՞, ասի կանչեմ մի նարեկ կարդաս գլխին: Գիտեմ, վոր քու սուրբ աղոթքով կլավանա, մեկ ել կնդաս խելքին չընկեմ.

ՏԵՐՏԵՐ.—Վո՞նց, ի՞նչ ա' ասում հարսր,

ՀԱՄԲ.—Յես ինչ դիտեմ, ասմա' պետք ա' տանեմ կոնսուլտացիա ա', ինչ ա', տամ ենտեղ:

ՏԵՐՏԵՐ—(սարսափած).—Հանուն հոր և վորդո (խաշակնելվում ե) . . . Ե՛ղ ինչ բան ե, մի՞թե կարելի յե՛ք բրիստոսի սուրբ մեռունով մկրտված երեխան տանել գցել են սատանայական բունը, աստված գլխներես կրակ կթափի: ԶԵ՛, Համբարձում, չինեմ չիմանամ եղպես բան անես. երեխեղ անորենք կդառնա. ենտեղից դուրս եկածն անհահավատ ա' կոչվում.

ՀԱՄԲ.—Խի՛, իմ գլուխոր մեռել ա՞. չատ ել թե նա ասում ա' . . . յես կթո՞ղնեմ, տղամարդի փափախ կա գլխիս, հո անհավատ չե՞մ.

ՏԵՐՏԵՐ.—Հա՛, հա՛, վորդի, ձեր հավատին, ձեր Քրիս-
տոսին ամուր կացեք. աստծու զորությունով ե-
րեխեն ել կառողջանա, դուք ել լավ կլինեք. որհ-
նա՛ծ: Յես ու դու, վոր մեծացել ենք, մարդ ենք
դառել, կոնցուլտացի յենք մտե՞լ:

ՀԱՄԲ.—Դե տերտեր ջան, քո սուրբ աջը մեր գլխի վրա
ըլի, ամեն բան իրա կարգով կզնա, դե խնդրում
եմ մի նարեկ կարդաս, երեխեն բալքի լավ ըլի:

ՏԵՐՏԵՐ.—Ես բոպեյիս վորդի ջան, (անցնում են ննջա-
րան, տերտերը նարեկ և կարդում, հետո պահ-
պանիչ, ապա խաչակնեում յերեխին): Լավ կլի-
նի, սիրող պինդ պահի. աստծու վրա դիր հույ-
սըդ, ամեն ինչ կանցնի, միայն կնոջդ խոսքին չր-
լանս, թե չե կնզովեմ, ավելի վատ կլնի. (մաշ-
տոցը պարզում ե դեպի Համբոն համբուրելու):

ՀԱՄԲՈ.—(Ձեռքը տանում և գրպանը, միաժամանակ
մոտենում, համբուրում և մի քղթադրամ դնում
վրան) .—Փառավոր մնաս, տեր հայր, չնորհա-
կալ եմ:

ՏԵՐՏԵՐ.—Բա արադից-բանից, չունե՞ս, (քղթադրա-
մը դնելով գրպանը):

ՀԱՄԲ.—Վոնց չունեմ, տեր-հայր ջան, քրիստոնի տա-
նից խունգ ու մոմր անպակաս կրլի՞: (Մոտենում
և շկաֆին, հանում մի շիշ ողի և բաժակ, լցնում,
պարզում և տերտերին):

ՏԵՐՏԵՐ.—(Ազահորեն նայելով ողին, քերանը ծըպ-
ծպացնելով. առնում և բաժակը).—Որհնյալ լի-
նես, աստված ուժ և կարողություն պարզեցաց.
զքեզ. բարյաց չնորհարար, չարյաց կործանա-
րար, վողջ լիրուք ի տեր (մի հարվածով կոնծում
ե և բաժակը պարզում Համբոյին):

ՀԱՄԲ.—Մեկ ել, մեկ ել, (առանց տերտերի ձեռքից
բաժակը վերցնելու, շիշը մոտեցնում, լցնում ե):

ՏԵՐՏԵՐ.—(Ողին կուլ տալով ու դեմքը կննողուելով)
—Որհնա՛ծ. մեկ ել, հալա երկու ել. բա չե՞ս լր-
սել՝ սար ու ձոր, տերտերի փոր:

ՀԱՄԲ.—Հալալ ա՛քեզ, տերտեր ջան, որհնությունդ
մեղնից անպակաս ըլի:

ՏԵՐՑԵՐ.—Որհնաւ լինեւ, ոչախիդ առատություն, հեղանգիտ առողջություն։ (Խմում ե յերկու յերեք բաժակ միմյանց յետևից, ու դուրս գնում)։

ՏԵՍԻԼ Յ. ՐԴ

Համբո և դալլաք Արքուն)

(Հենց սերտերը դուրս ե գնում, մտնում ե դալլաքը կաշվե տոպրակի մեջ գործիքները կողքից քաշած, մի փայտ ձեռքին։ Համբոն շիշն ու բաժակը ձեռքին, սերտերին նաևապարհ դնելուց հետո, մի յերկուսն ել ինքն ե գցում)։

ԴԱԼԼԱՔ.—Բարիլուս. ուստա Համբարձում, աղա՛, եղ ի՞նչ ես անում, փորբդ յեղում ե՞ս.

ՀԱՄԲՈ.—Վա՛, տղից տղա՛, հաղար բարով, ուստա Արթուն. համեցե՛ք. կալի վրա յես պատահել, դե մարդու ներսը շուտ շուտ փաստում ա՛. դու լա՛վ գիղաս, հեքիմ ես, արադն ասում են, ինչ քան զարար բաներ կա, սրբում տանում ա՛. ըտենց չի՞:

ԴԱԼԼԱՔ.—(Նստում ե դազգահի շուրջը, ողին գնում են մեջ սեղ, Համբոն լցնում ե բաժակը, մեկը ինքն ե խմում, մյուսը տալիս Դալլաքին)։

ԴԱԼԼԱՔ.—Արադի պես հեքիմ բան չկա ախշարքումս. մայասուլը, փորի սանջուն, գլխացավը, սաթլամը, ծեծվածը, մալաքորը, իլանջուղը—բոլորն ել արադով բժշկվում ա. ես անտերը մարդու հենց ա կակղացնում ու սարթացնում, վոնց վոր Լոխմանին, դու հո գի՞ղաս Լոխմանի հեքիմը։

ՀԱՄԲՈ.—Լսել եմ. ասում են նա մի գեղ եր շինել, վորը մեռած մարդու բերանը վոր կաթացնում եր, են սհաթին հարություն եր առնում.

ԴԱԼԼԱՔ.—(Վերցնելով բաժակը).—Դե մենք, հեքիմներս, մեր բժշկությունը սաղ լոխմանուց ենք վերցրել։ Սաղ ըլես, աստված մեկդ հաղար անի. յես ինքըս նրա հեքիմարանը բերանացի գիտեմ. ինչ հիվանդություն ընի, վոր չբժշկեմ։ Մենակ

մարդուն հարություն տալ չեմ կարում. չունքի
Լոխմանին ինքն ասել ա՛, վոր մեռելին հարու-
թյուն տալը մեղք ա՛, պատծուն հակառակ ա՛,
դրա հմար ել եղ անմահական գեղի չիշուէը չի
դրել իր գրքում: Ամմա, խոսքը մեր մեջ միա՛,
յես գտել եմ, միայն մի բանը պակաս ա՛, են ել
Ալագյազում մի քյուրդ կա, խոստացել ա ինձ
բերի. չունքի եղ ծաղիկը բնդեղ ա բուսնում:
Սաղ ըլնես, (խմում ե):

ՀԱՄԲՈՒԹ.—Քու հունարը գիրամ, հիմիկվա բժշկներին
յես ըսկի չեմ հավատում. իմ յերեխուն դու
պետք ա՛ բժշկես:

ԴԱԼԱԱԲ.—Զաներմ քանի՞ կապեկ աժեն եղ բժիշկները,
թող գան մոտս բան սովորեն. թե չե գրանց տա-
սին մի նշտարիս ծերով կզարմացնեմ:

ՀԱՄԲՈՒԹ.—Թե վոր բժշկե՞ս, մի հատ տասնոց կտամ
հը՛, թող մի կնիկս իմանա՛, վոր իրա կոնցուլ-
տացից զուրս բառեղ մեծ հեքիմություն կա.
(լցնում ե բաժակը). —Խմի՛, ուստա ջան. վոտդ
խերով լինի ինչքան շնորհք ունես, խարջի յե-
րեխուս վրա.

ԴԱԼԱԱԲ.—Իմ գլխիս վրա, հենց բժշկեմ, վոր ըլնի մորե
մեկ. սաղ ըլնես. (խմում ե: ինմում ե և
Համբոն):

ԴԱԼԱԱԲ.—Դե մի տեսնենք երեխուն. (վեր են կենում.
Համբոն. վերցնում ե ողիփ շիշը, դնում ե
շկափը. մոտենում են որորոցին: Դալլաքը յետ
ե քաշում մանկան վրայի թաճիֆը, կոտեսում, նա-
յում ե): Հը՛մ, հասկացա. երեխու տամարներում
պղտար արին կա. դրա համար ել բեհավուշտ վեր
ընկած ա՛, մի պստիկ արին վոր առնեմ թեից, են
սահաթին ուշը վրա կդա: (Կողֆից քաշ արած
կաշվե տոպքակը հանում ե, դնում սեղանի վրա.
միջից հանում ե նշտարը): Դե մի յաղանից-բա-
նից բեր. համ ել երեխու թեր բաց արա.
(նշտարը ձեռքին, մոտենում ե որորոցին. Համ-
բոն վորոնում ե յագանը: Կուժն ուսին, մտնում ե
Սոնյան:

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՍՈՒՅԱ

ՍՈՒՅԱ.—(Կուժը դնում ե տեղը, ներս և մտնում նեղարանը. տարակուսանքով մեկ նայում ե Համբոյին, մեկ ել դալլաքին և աչքն ընկնելուն պես նշտարին, նշում ե) վա՛յ, երեխիս սպանում են, (մոտ ե վազում որորցին, մի կողմ ե հրում Դալլաքին): Ի՞նչ ես ուզում անել, զաղա՛ն. Հեռացի՛ր, քեզ ո՞վ ասաց, վոր իմ տունը գաս, իմ յերեխուռ գլխին հեքիմություն անես: Կորի՛, կորի՛ ես տանից. (Համբոն շվարել, կանգնել ե):

ԴԱԼԼԱՔ.—ԶԵ՛ք ուզում, չի հարկավոր, ել ինչի յեք անպատվո՞ւմ. յես հո չեմ խնդրում. ուստա Համբոն եր իմաց արել, յես ել եկել եմ, վոր լավացնեմ:

ՍՈՒՅԱ.—(Ամուսնուն). —Դու քու եղ խելքովդ յերեխուռ. կսպանես, հերիք ե վերջապես.

ՀԱՄԲՈ.—(Սթափիվելով). —Սուս, ա՛յ կնիկ. ձենդ քեզ քաշի. ի՞նչ ես ծղրտում: Հստեղ մարդ կա. աբուող քեզ քաշիր:

ՍՈՒՅԱ.—Յերեխիս նշտարով ծակեն, սպանեն. ձեն չհանե՞մ, տո տգե՞տ. բայլական ե յե՞. սպանեցիր յերեխուռ քու հեքիմներով. չեմ ուզում. թող կորչեն.

ԴԱԼԼԱՔ.—(Կաշվե տոպրակն ուսն անց կացնելով ու գեպի դուռն ուղղվելով) պա՛հ, պա՛հ պա՛հ, ժամանակիս կնանիքոնցից տերը փրկի, ազատի, ոճի կծածեն, ոճի՝ (գնում ե):

ՀԱՄԲՈ.—Բա ի՞նչ ես ասում, չբժշկե՞նք.

ՍՈՒՅԱ.—ԶԵ՛ք քու դործը չի. յես դիտեմ վոնց բժշկել կտամ.

ՀԱՄԲՈ.—Տո դու գլուխուր քարովը կտաս: Միտքդ ի՞նչ ա՛...

ՍՈՒՅԱ.—(Կոանալով որորցի վրա, գուրգուրելով). —Ամա՛ն, ժորժիկ ջան. ի՞նչ լավ ելավ, վոր չուտ եկա, թե չե սպանելու ելին. բալիկ ջան, բալիկ

ջան, (արտասվում ե) .—Երեխուս ձեռնամեղով
սպանելու եյին (ամուսնու կողմը) ես անխիղճը,
Հիմար ե Հիմար. վոչինչ չի հասկանում:

ՀԱՄԲՈ.—Հիմարը դու յես, դո՛ւ, վոր եղածս անզգա-
մություն ես անում: Բա վո՞նց ես ասում,
չբժշկե՞նք.

ՍՈՒՅԱ.—Կրժշկենք, բայց վոչ դալլաք-դուլլաքով,
դրբացով ու Փալիներով. յես իմ յերեխուն պի-
տի տանեմ կոռպերատիվ կոնսուլտացիեն.

ՀԱՄԲՈ.—(Բարկացած. սպանալիխով) .—Քեզ ենպես
կոնսուլտացի կշանց տամ, վոր դմխիդ վրա վոչ
մի մաղ չմնա, գիտե՞ս:

ՍՈՒՅԱ.—(Ձեռքը գլուխը տանելով) .—Միթամ մազ
ես թողել գլմի՞ս որը մի հետ պըճոկելով ու
ծեծելով, քեզ խիղճ ունե՞ս: Ի՞նչ ե, ի՞նչ ես կը-
պել պառավական բաներին, որը մի հետ դալլաք
ու Փալին յես բերում, ուրիշները—խելոք, հաս-
կացող մարդիք իրանց յերեխաներին տանում են
հանձնում կոնսուլտացիեն, ենտեղ բժշկների,
դայակների հսկողության տակ բժշկում, սնումու-
նեն տալիս, առողջացնում, կազդուրում են, իսկ
դու քալիթառ պառավներին, դալաքներին, տեր-
տերներին ես լսում, գնացիր կոռպերատիվի ան-
դամությունից ել դուրս յեկար:

ՀԱՄԲՈ.—Յես չեմ ուզում. իմ յերեխեն չպիտի գնա
կոնսուլտացի. են անհավատների բունը, վոր
մկրտության սուրբ մեռոնը վրայից վերցնեն,
անորեն շինեն.

ՍՈՒՅԱ.—Դե դու կատարյալ դդում ես, բան չես հաս-
կանում:

ՀԱՄԲՈ.—Խոսքերդ չափավորի, թե չե.

ՍՈՒՅԱ.—Հը՛, ի՞նչ պիտի անես, բռունցքո՞վդ ես վա-
խեցնո՞մ. դե համեցեք, փորձիր: Յես ասում եմ
վոր իմ յերեխին կոնսուլտացիա պիտի տանեմ,

ՀԱՄԲՈ.—(Սպառնալով) .—Մինչև տանելդ, դու կկոր-
չես ես տանիցը. իմացա՞՞ր:

ՍՈՒՅԱ.—(Հեգմանեխով) .—Պահ. չատ հարկավոր ե.

քեղպես խավարամիտ, նախապաշտրված, փռած
խելքի տեր մարդու հետ ապրելն ել չարժի. վա-
խացնում ե՞ս: Կարծում ես թե չե՞մ կարող ապրել
առանց քե՞զ. ես ցարական ժամանակը չի՛. կա-
րող եմ յես ել աշխատել, գործի մտնել, ապրել,
ել հիմի յերեխեքը մեր ձեռ ու վոտը չեն կապում:
ՀԱՄԲՈ.—(Գագանացած).—Շա՞ն աղջիկ, իմանում ես
ինչեր ես խոսո՞ւմ. գլուխդ կջարդեմ հա՛.
(բռունցք սեղմած մոտենում ե)

ՍՈՆՅԱ.—(Պաշտպանողական դիրք բռնելով) . . . Ապա՛,
համեցեք. հենց փորձել ես ձեռդ մոտեցնել թե
չե, կճշամ, Ժենյային կկանչեմ. դու հո գիտես
նրան ինչ իրավունքներ ունի, կտեսնես գլուխդ
ինչ կդա:

ՏԵՍԻԼ 5-ՐԴ

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՖԱԼԶԻ ԼՈՒՍՈ

ՖԱԼԶԻ.—(Ներս ե մտնում անշուկ, ինչպես ուրիշական,
խոսում ե յերգելով).—Ե՞ս ի՞նչ աղմուկ ե. դուռը
բաց են թողել (մտնում ե ննջարան).—Յերևե
յերեխեն առողջացել ե:

ՍՈՆՅԱ.—(Թշնամաբար).—Վոնց չե, (կողմը) քավ-
թառ. (իրան) քու եդ բժշկությամբ սպասիր,
վոր լավանա.

ՀԱՄԲՈ.—Մոնյա՛, քեզ ասում եմ՝ թող եդ քու հիմա-
րություններդ.

ՍՈՆՅԱ.—Ինչ-թող, հա թող, թողնեմ յերեխիս ձեր
հեքիմությունով տանջեք, սպանե՞ք. արդեն
մեռնելու դուռն եք հասցըել:

ՖԱԼԶԻ.—Հոգուտ մեղք ես անում, աղջիկս, խաչ հան
յերեսիդ, մեղա կանչեք, իմ տված դեղը սուրբ
մեռոն ե, աստծու տված հրաշքը թույն չի լինի.
մեղք ե: Զեք ուզում, կերթամ, յես չեմ խնդրում,
ամուսինդ ե ինձ կանչել: (Ուզում ե գիտալ):

ՀԱՄԲՈ.—Մորաքո՞ւր, սպասիր, ո՞ւր ես գնում. ես
տան տերը յես եմ, նա չի՛: (Սոնյային) իսկ

դուր, անամոթ, տարվել ես ևն սատանի ծնունդ-ներին, ԺԵՆՅԱ յե, ինչ ե, դուրս, դուրս գնա իմ տնից.

ՍԹՆՑԱ. —Կգնա՛մ, կգնա՛մ, բայց ևսեղից դուրս չեմ գա առանց յերեխայիս:

ՀԱՄԲՈ. —(Զայրացած) Հա՛մ... կտանե՛ս բաս չե՞մ... (մոտենում, բռնում ուսից, քարշ ե տալիս դեպի դուռը).

ՍԹՆՑԱ. —(Ճիչ, աղաղակ) Չեմ գնա, չեմ գնա առանց յերեխիս. կդեղեք, կսպանե՞ք...

ՀԱՄԲՈ. —Ասում եմ՝ կորի՛, դուրս գնա, յես գիտեմ իմ յերեխեն. (Քաշքաց, իրարանցում): Վա՛յ, ձեռս, ձեռս կծեց... այ քեզ կծել... (ծեծելով հրում ե կնոջը դեպի դուրս).

ՖԱԼՋԻ. —Տե՛ր, մեղա աստծու. (կովողներին). — Ամոթ ե, ամոթ ե, քրիստոնյաներ, յերեխին սրտաճաք կանեք, սուս եք... (մոտենում ե որորցին, սկսում ե որորիլ):

ՍԹՆՑԱ. —(Դուռն մոտ դիմադրելով ամուսնուն). — Գաղաննե՛ր, անխիղնենե՛ր, տվե՞ք իմ յերեխին: ԺԵՆՅԱ... (Համբոն հրում ե դուրս, դուռը կողպում, փողցում լսկում ե Սոնյայի ձայնը, վոր հեռանում ե աղաղակելով—ԺԵՆՅԱ', ԺԵՆՅԱ', հասի՛ր, ոգնիր ինձ, յերեխա՛ս)... .

ՏԵՍԻԼ 6. ՐԴ ՀԱՄԲՈ ՅԵԿ ՖԱԼՋԻ

ՀԱՄԲՈ. —(Ներս գալով և կծած ձեռքը բռնած). — Հալա դու դրան թամաշ արա, ուզում ա՛ յերեխա տանի, անզգա՛մ, քեզ յերեխա կտամ վոր տանե՞ս:

ՖԱԼՋԻ. —Եես գնա՛մ, անհամություն ե դուրս դալիս:

ՀԱՄԲՈ. —Ինչ անհամություն, առաջին անգամը չի վոր եղ ոյինր բերում ա իմ գլխին. թող կորչի, ինձ պետք չի եղակա անամոթ ողյուշաղը:

ՖԱԼՋԻ. —(Կեղծ բարեսրությամբ). — Եղակաս բան մի անի, մեղք ե, աստված զարուլ չի անի:

ՀԱՄԲՈ. —Բաս աստված զարուլ կանի, վոր իմ յերե-

խուն տանի գցի են անորէնք կոնսուլտացե՞ն, մագյար իմ դլուխը գետինն ա մտե՞լ, յես թա-սիր չունի՞մ,

ՖԱԼՁԻ.—(Յերկյուղածությամբ) Ֆողն իմ գլխին... կոնսուլտացե՞ն վորն ա՛, յերեխե՞ն ինչ, տանել գցել են լեկըների ձեռն ինչ, վոր գա-նակով կտրատեի, յես ինչ գիտեմ ինչ անեն:

ՀԱՄԲՈ.—Սավահի եղ. ջանը՛մ, վոր սաղացնեն ել ինձ ինչ ողուտ: Նա ինձ յերեխա, վորդի պիտի դառ-նա՞: Նա ենտեղ մեծանա հեր ու մեր կճանաչի՞, մանավանդ, վոր մեռոնից հանում, անհավատ են դարձնում. չե՛, լուսո բաջի, դու քու հունա-րը խարջի. յերեխուն լավացրու, թող նա քու-չեքն ընկնի, յերեխա ասելով ման դա, վերջը դա ընկնի վոտիներո, վոր տուն թողնեմ, յես տղա-մարդ եմ:

ՖԱԼՁԻ.—(Կեդծ վարանում ցույց տալով).—Ախը՞ք... .

ՀԱՄԲՈ.—Ախըր-մախըր չկա, հունար ունես ցույց տուր, լավացրու, մի գեյրա կառնեմ քեզ.

ՖԱԼՁԻ.—(Խնձնարավական) Դե՛ լավ, լա՛վ, կը-րժշկեմ, աստված եղ շնորքն ինձ տվել ա՛, միայն թե դու կնոջդ հետ հաշտվիր: Ո՞ւր ա՛. մի ոյումկա բեր տեսնենք. (մոտենում ե որորցին, իսկ Համ-բոն պահարանից հանում ե ոյումկան, տալիս ֆալչուն, վոր առնում, դնում ե սեղանի վրա, մետեղում: Ապա դռան յետևից վերցնելով վա-ռարանի ունելիքը (մաշա) մոտենում ե որորցին և երա շուրջը խաչան գծեր անում ոդի մեջ, խա-չակնիւլով յերեսը, հետո ունելիքը դնում ե սեղը, մոտենում սեղանին: Նախ աջ ձեռքով խա-չակնիւլում ե ձախ ծոցը և հետո աղոք անելով, ծոցից հանում ե կանանչ հեղուկով լցված մի սրբ-վակ, ամելով՝ անուն հոր և վորդո և հոռույն սրբ, ք-քում ե չորս կողմը և ապա վերցնում ոյումկան դիմելով Համբոյին—որորի յերեխուն և մտքումդ աղոքք արա): Սկսում ե սրբակից հե-դուկը կաք կաք ածել և բարձր ձայնով ասել).— Ես մի կաթիլն աստծուն, ես մեկը Քրիս-

տոսին, ես մեկը ուրբ հոգուն, ես չորս կոթիլը՝ չորս ավետարանիչներին, ես մեկը՝ Մարիամ աստվածածնին, 12-ը՝ սուրբ առաքյալ ներին, ես ոխտ կաթիլն ել՝ ոխտ տեղից վերը ստացած, մեռնեմ իր սուրբ զորությանը, Յոթվերքին. տե՛ր, դու յերեխուն փրկություն տաս, (մոտենում ե որորոցին):

ՀԱՄԲՈՇՆ.—(Նախապաշարմունքով խաչ հանելով) Եղ ի՞նչ դեղ ա մորքուր.

ՖԱԼՁԻ.—Սա դեղ չի այ վորդի, սա են անմահական յուղն ա՛, վոր Մարիամ Մաքթաղենացին ոծելա Քրիստոսի գլուխին ու վնաները: Են ես անմահականը բերել եմ Յերուսաղեմից, յերբ ուխտ եյի գնացել. են ժամանակ շատ ջահել եյի ու դեղեցիկ: Զեյին տալիս, բայց մի վարդապետ ինձ համար ձեռք բերեց և տվեց, համա ինչ գնով. շատ, շատ թանգ գնով տվեց:

ՀԱՄԲՈՇ.—Քեզ արքայություն ըլնի, մորքուր. Եղ սուրք ոծելիքն ել վոր երեխուն չլավացնի, վոչ մի հեքիմ չի կարա...

ՖԱԼՁԻ.—Յերբա վոր գերեզմանից զուրս դար, ես դեղը յես չեյի հանի ծոցիցս (խաչակնքելով): Մեղա ասսու, դեղ ասեցի, սա, Քրիստոսի ոծելիքն ով դիղա, ինչ անմահական դրախտի ծաղիկներից աշխած, քու խաթրը տես ինչքան եմ սիրում վոր...

ՀԱՄԲՈՇ.—Լա՛վ, լա՛վ, մորքուր, յես ել մարդ եմ, հասկանում եմ:

ՖԱԼՁԻ.—Գիտեմ... բայց պետք ա մի ջուխտ ել տուժիլի կարես ինձ համար:

ՀԱՄԲՈՇ.—Աչքիս վրա, եղ ել կանեմ, միայն երեխուն լավացրու...

ՖԱԼՁԻ.—Դե դու յերեխի բերանը սեղմի, բաց արա, յես լցնեմ բերանը. (Րյումկան մոտեցնում ե, յերկուսով կուանում են բարուրի վրա: Այդ ժամանակ լուսամուտից ներս են նայում Սոնյան և Ժենյան):

ՆՐԱՆՔ ՍՈՆՅԱ ՑԵՎ ԺԵՆՅԱ

ՍՈՆՅԱ.—(Հուսամուտից դլուխը ներս մտցնելով և սաստիկ ցնցվելով տեսածից, ժենյան նշան և անում համբերել բայց վերջինս չի համբերում) ժենյա՛, ժենյա-ջան, յերեխիս թունավորում են, չո՛ւտ, չո՛ւտ, հասի՛ր.

ԺԵՆՅԱ.—Արագ բացելով փեղկերը ներս և թռչում և մոտենալով խում և պառավից սրվակը, իսկ ոյումկայի միջինը թափում): Հեռո՛ւ, հեռու կորիր յերեխայից վհուկ:

ՀԱՄԲՈՒ.—(Շվարած, հետ ու հետ գնալով. կողմը) Սատանա ելի՞ն, ևս վո՞քտեղից բաւան. (ժենյային, կակաղելով) ի՛ ի՛ ի՛ նէ գործ ուննենե՛ս.

ԺԵՆՅԱ.—(Ազյալի մեջ փաթաթելով Բարուրը) ինչ դործ ունե՞մ. տեսնո՞ւմ ես ինչ գործ. յերեխան պիտի վերցնել այստեղից. (Փալչին վախից կըծ-կվիլ ե, ուզում ե ծլկվել):

ՅԱԼՉԻ.—(Կակաղելով) ի՞ ի՞ ի՞ վերցրիր իմ շուշեն. տուր ինձ. յե՞ յե՞ս գնում եմ:

ԺԵՆՅԱ.—Կորչում ես կորի՛ր, վհուկ, բայց սրվակը պիտի հանձնել թշշկական պերսոնալին, անալիկ անելու: Են ժամանակ միայն քեզ հետ կիսունենք.

ՀԱՄԲՈՒ.—Դու ո՞վ ես, ինչ իրավունք ունես խառնվելու իմ ընտանեկան դործերին:

ԺԵՆՅԱ.—(Յերեխան տալով Սոնյային) Ա՞ռ սրան. (Համբոյին) իրավունքի մասին կիսունենք դատարանում, յերբ դու նստած կինես մեղաղբական աթուին:

ՍՈՆՅԱ.—(Գուրգուրելով Բարուրին) Ամա՞ն... ազիկ ջան, արի՛, մամայիղ, ի՞նչ ելին աալիս քեզ-թույն, դալլաքն ել թե՞դ եր ուզում նշտարել:

ԺԵՆՅԱ.—(Սոնյային) Գնանք այժմ:

ՀԱՄԲՈՒ.—(Վրա պրծնլով և առաջները փակելով) ո՞ւր եք տանում յերեխին:

ԺԵՆՅԱ.—(Հրամայողաբար) Հեռացի՛ր առաջներիցս:

ՀԱՄԲՈ.—Զեյթուլ տա, (հարձակվում ե Սոնյայի վրա, ուղում ե Բարուրը խլել):

ՍՈՆՅԱ.—Հեռո՞ւ կաց, անամոթ, մարդասպան. իմ յերեխուն սպանում ես զու՝ (բարուրը պինդ սեղմում ե կրծքին, Համբոն ձգում ե իրան).

ՃԵՆՅԱ.—(Արագ մոտենալով լուսամտափին և զլուխը հանելով. ճայն ե տալիս) միլիցիա՛, չո՛ւս, այստեղ յեկեք.

ՀԱՄԲՈ.—(Լսելով միլիցիայի անունը, վախեցած, կանգնում ե պատի տակ):

ՏԵՍԻԼ 8 ՐԴ

ՆՐԱՆՔ ՑԵՎ ՄԻԼԻՑԻԱ.

ՄԻԼԻՑԻԱ.—(Ներս ե գալիս, տեսնելով ժենյային, հարգանքով բարեւում ե) ինչ կհրամայեք, ընկեր ժենյա:

ՃԵՆՅԱ.—Նախ բանտ պիտի տանել այս վհուկին (ցույց տալով Փալչու վրա), վորի մասին քննություն պիտի կատարել. հետո այս մարդուն (Համբոյին) զգուշացրեք, վորը խանգարում է ծծի յերեխային մորը հանձնելու. նրան պետք ե մոուր տանել:

ՄԻԼԻՑԻԱ.—Եեթե մայրը կամենում ե, խնդրեմ, համեցեք. (Ժենյան և Սոնյան անցնում, գնում են, տանելով յերեխային): (Փալչուն). գե՛, բաջի՛, քայե՛... (Փալչին սարսափած, հետևում ե միլիցիային).

ՀԱՄԲՈ.—(Հուսահատական շարժումներ) Ես ել արդարություն ա՞-. բաս դան քու յերեխին տնիցդ հանեն, տանեն, հալա մի մեղադրական աթոռին ե՞լ նստացնեն. Աստված՛ծ, ո՞ւր ա հախ դատաստանդ:

(Վարագույր)

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՅԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կոնսուլտացիայի շենքում . բժշկի ընդունարանի նախասենյակը, ուր սպասում են այցելուները : Սենյակը զարդարված ե բաղկաթուներով . (յեթե չկա այդպիսին, աթոռներ և նստարաններ) : Յերկու մուտքի դռներ, մեկն աջից, վոր մոտ ե հանդիսականներին, մյուսը ձակատին, ձախ անկյունի մոտ : Լուսամուտները ձախ պատի մեջ : Պատերին փակցրած են զանազան դիագրամմաներ և պլակատներ՝ կոնսուլտացիայի նվաճումների և կոռոպերացիայի մասին, որինակ՝ «Կոռոպերացիայի միջոցով դեպի նոր կենցաղը» : «Կոռոպերատիվ նաշարանները, լվացքանոցները, մսուրները, մանկան հրապարակները տանում են կենցը դեպի ազատագրում՝ ընտանեկան սորկությունից» : Բնդունարանի ձակատին, զուսն վրա լոգունկ «կոռպ., կոնսուլտացիայի միջոցով կառեղծենի նոր առողջ սերունդ» : Աչքի ընկնող տեղում, սեղանարկղի (տումբուչկա) վրա կանդնեցրած ե Լենինի մեծադղիք նկարը : Սեղանարկղի վրա գրված ե ջրով լի գրաֆինկա :

ՏԵՍԻԼ ፤ ԻՆ

ԴԱՅԱԿ՝ ՄԵՆԱԿ

ԴԱՅԱԿ.—(Վարագույրը բարձրանալուն պես ուսմբի նման ներս ընկնելով)—ՌՀ, հոգնեցի, շունչս կարգեց . ՌՀ, նահնի ջան, (սիրտը բռնելով ու հելվալով) ենպես ե խփում, թրաքրում, ինչպես ծիտը . չաղությունն ել մի բանչի . (նատում ե) : ՌՀ, սիրտս . . . բայց ինչ լավ ելավ . Ժենյայի բանը փուստ անց կացավ : Զասե՞ս թե ուզում ե մեր կոնսուլտացիայից պոչը պոկել . բայց թողնովն ո՞վ ե . հենց մի գլուխ ասում ե —զեպի գյուղ, զեպի գյուղ . . . գյուղին մոտ պետք ե լինել : Ասենք մի գուցե հաջողի ենտեղերք մի մսուր բանալ, կամ մանկական հրապարակ . . . ինչ ասել, նրա ձեռքից ամեն բան կգա . . . բայց ափսոս մեր

ԺԵՆՅԱՆ. Հոգի յի—Հոգի, եղպես ժիր, եղպես
 աշխուժ ու ակտիվ, մի հատ ե, մեր կոնսուլտա-
 ցիայի հոգին ե, բոլորին աչքի լույսը: (Նայելով
 ընկ. Լենինի նկարին) բայց ինչո՞ւ թեքվել հ
 նկարը, ինչպե՞ս չեմ նկատել, այս բոպեյիս ուղ-
 ղեմ: (Տնբալով վեր և կենում, արոռը մոտ ե թե-
 րում, ուզում ե բարձրանալ, բայց դժվարանում
 ե) Ա՛հ, ինչ անճոռնին եմ, դժվար ե. (վերջապես
 բարձրանում ե, ուղղում, բայց մի անզգույշ
 շարժումով դիպչում ե գրաֆինկային, վոր վայր
 ե ընկնում, փշովում ե) Ա՛հ, ա՛հ, հողն իմ դմախն,
 մի բան շինեցի, մյուսը վնասեցի. այ քեզ ան-
 շնորհքություն:

ՏԵՍԻԼ 2-ՐԴ

ԴԱՅԱԿ, ԺԵՆՅԱ. ՅԵՎ. ՍՈՆՅԱ.

(Ներս են գալիս առաջ ժենյան. հետո՝ Սոնյան,
 բարուրը գրկին).
ԺԵՆՅԱ.—(Սոնյային) Ժորժիկիդ համար, Սոնյա ջան,
 բոլորովին ապահով կաց. անշուշտ, նրան կըն-
 դունենք. առածն ասում ե—վորտեղ զարկ կա,
 ենտեղ ել կյանք կա: (Դայակին) Բա՛րե սիրի
 դայակ.

ԴԱՅԱԿ.—Ա՛խ, Ժենիչկա ջան, բա՛րե ազիզ ջան (ու-
 զում ե իջնել, բայց չի կարողանում: Ժենյան
 մոտենում ե ոգնելու, վորի ոգնությամբ իջնում
 ե): Հիմա կարող եմ ձեզ ծառայել Ժենիչկա ջան,
 (համբուրտմ ե), բայց դու ինձ վրա մի՛ ծիծա-
 զի, Ժենյա ջան, վոր եսպես անճոռնի չաղ եմ,
 կարծես բոմբի լինեմ.

ԺԵՆՅԱ.—Ֆրանցուզսկի բուլկի... հա՛, հա՛, հա՛, բայց
 եղ ի՞նչպես և վոր եղպես չաղացել ես, փքվել.

ԴԱՅԱԿ.—Հիվանդություն ե Ժենիչկա ջան: Ջահել ժա-
 մանակս ենալես բարակ, սիմպատիչնի աղջիկ եյի,
 վոր ինչ ասեմ. 30 տարեկան հասակիցս ինձնից
 անկախ պատճառով եսպես փքվեցի ու տանջվում

իմ, (նայելով հատակի փշրված գրաֆինկային ու տումբուչկային): Ա՛խ, անչնորհք տումբուչկա, ինչքան ինձպես ծանրաշարժ դայակներ վախեցրած կլինես:

ԺԵՆՅԱ. — Հը՛, կոտրելիս վախեցա՞ր... Ե՛, վոչինչ, առում են՝ սայլից վեր ընկածը կորած ե, աշխատիր ուրիշ բաներում խնայել:

ԴԱՅԱԿ. — Զե՛, ժենիչկա ջան, սիրելի՞ս, յեթե մի հարուստ մարդու ապրանք լիներ, վոչինչ, շատ ժամանակ հենց գիտմամբ կոտրում եյինք. բայց չե՞ վոր սա հասարակական սեփականություն ե՝ մեր կոնսուլտացիայի իրը, բանվորի ու գյուղացու կոպեկներն են... մեր աչքի լուսի պես պետք է նայենք: Ա՛խ, յես անչնորհքս:

ԺԵՆՅԱ. — Դե լա՛վ, լավ, սիրելիս. զու մեղ համար շատ թանգ արժես: Բայց մի ես կողմը նայիր, յես հո մենակ չե՞ս. Սոնյան եստեղ ե.

ԴԱՅԱԿ. — (Հետ նայելով և տեսնելով) Վո՛ւյ, քուանամ յես. իսկի ուշըս վրա՞ս ե: Բա՛րե, Սոնյա ջան. նստի՞ր (տեղ ե ցույց տալիս) ա՛յ, եստեղ նստի՞ր. ես քու բալի՞ն ե, վույ, վույ, վույ, ինչքան նվազ ե. Հիվա՞նդ ե, ինչ ե.

ՍՈՆՅԱ. — Հիվանդ ե սիրելիս.

ԴԱՅԱԿ. — Նո՞ւ, բարի առողջություն... բայց յես եստեղ խոսքով ընկած. վերեւ պետք ե կաթերին նայել, հիմի պետք ե յերեխաներին կերակրել.

ԺԵՆՅԱ. — Լա՛վ, յես կդնամ կնայեմ. քեզ գժվար ե մեկ ել փիլաքաներից բարձրանալ (գնում ե):

ԴԱՅԱԿ. — Քա չե՛, չե՛, ժենյա ջան. յես կդնամ. (բայց արդեն ժենյան գնացել եր) Հոգի ա՛, Հոգի, հենց ամեն բանում—յես կդնամ, յես կանեմ. (մտարերելով կոտրված գրաֆինկան. տնելարով կոտնում ե, ուզում ե փշրանքները հավաքել):

ՍՈՆՅԱ. — Դու նեղություն մի քաշի, առ յերեխին, յես կհավաքեմ նանի-ջան.

ԴԱՅԱԿ. — Քա յես ի՞նչ նանի յեմ. խոմ չե՞մ պառավել, վոր նանի յես ասում. ձեզանից ել ջահել եմ.

(վերցնելով բարուրը) : Դե՛ լա՛վ, լավ, նեղություն քաշիր, ոֆ, չունչս կտրվում է : (Նայելով բարուրին ադյալի տակից) խեղճ փոքրիկ, խեղճ փոքրիկս, ի՞նչ է պատահել սրան . (Սոնեային) : Ա՛յ, ենտեղ, արկղի մեջ լցլու կտրտանքը :

ՍՈՆՅԱ. — Ի՞նչ ասեմ, սիրելիս . ևս յերսորդ որն է, վոր եղած նվազած, ձեն ու ձուն կտրված, անքում է : Սկզբից սկսեց վոչինչ չուտել, իսկ հիմա ել զկրտում է, բերնից ջուր և գնում . բայց հիման գանալու որերում մի զլուխ բղավում էր :

ԴԱՅԱԿ. — Ինչո՞ւ չուտ չեյիր բերում կոնսուլտացիա, չե՞ վոր սա ձեզ նմանների համար է :

ՍՈՆՅԱ. — Ախըր չե՞ վոր մենք կոսպերացիայի անդամ չենք, ինչպե՞ս բերեյի . եսեղ ընդունում են միայն կոսպերացիային անդամագրվածների յերեխաններին :

ԴԱՅԱԿ. — Եղ եղած է . բայց ինչո՞ւ դուք չեյիք անդամագրվել :

ՍՈՆՅԱ. — (Վշտացած) Ախ ի՞նչ ասեմ . . . յես վաղուց գրված կլինեյի . բայց ամուսինը . . . նոս թույլ չի առվիս . ասում է՝ կոնսուլտացիան աստծուն հակառակ բան է, Քրիստոսի մկրտությունը հետ են վերցնում, անաստված են, դարձնում . Հենց վոր կոնսուլտացիեն բացվեց, կոսպերատիվի անդամությունից դուրս յեկավ :

ԴԱՅԱԿ. — Ա՛յ քեզ հիմարություն, ա՞յ, տեսնո՞ւմ ես ինչ սուտ լուրեր են տարածում մեր հակառակորդները, յես ել լսել եմ եղ մասին :

ՍՈՆՅԱ. — Մի՞թե յես չեմ իմանում, վոր բոլորը բամբասանք են, պատավների, Փալչիների, տերտերների հարած սեր են :

ԴԱՅԱԿ. — Իսկ դու եղ բացատրե՞լ ես ամսունուդ .

ՍՈՆՅԱ. — Բացատրե՞լ . . . ի՞նչ կլսի նա ինձ, ենպես բոունցքներ և տալիս գլխիս (շարունակելով հավաքել փշրանքները) : Ավել չկա՞ . ես փշրանքներն ել հավաքենք .

ԴԱՅԱԿ. — (Ցույց տալով) Ա՛յ, են դռան յետեռումն է .

(Սոնյան գնում ե ավելը վերցմելու, դայակը նորից պրապտում ե յերեխայի բարուրը) Բայց այս ի՞նչ կանաչ, յուղալի բան եք տվել յերեխին, զոր թանդիֆը կանաչել ե.
ՄԵԽՅԱ. — (Դառնությամբ) Ա՛խ, յես ի՞նչ կիսեմ, նանի ջան.

ՏԵՍԻԼ 3 ՐԴ

ՆՐԱՆՔ, ԲԺՇԿՈՒՀԻ ՑԵՎ ԺԵՆՅԱ.

ԺԵՆՅԱ. — (Սոնյայից լսելով նանի բառը) Ի՞նչ ես վիրավորում մեր դայակին. նա խոմ պառավ չի՞.
Չուտով նրան պասկելու յենք. (ծիծաղում են):
ԴԱՅԱԿ. — Տեսնում ես ժենյա ջան, ինձ նանի յեն կանչում. սպասիր մի տոներին գեհիմո հագնե՞մ.
տես ով ե ջահել, ով ե պառավ.
ԺԵՆՅԱ. — Իհա՞րկե, իհա՞րկե, ջահել, սիրուն, չաղ,
ենպես չի՞ (բոլորը ծիծաղում են):
ԲԺՇԿՈՒՀԻ ՆԻՆԱ. — Նո՞ւ, լո՛վ, բնկերներ, վեպի գործ:
(Դայակին) Սիրելիս, դուք դնացեք ենտեղ պատրաստություն տեսեք, վոր ընտարությունը պիտի սկսվի (Սոնյային) իսկ դուք, սիրելիս, դնացեք նրա հետ, յես այս բոպեյիս կգամ:
ԴԱՅԱԿ. — Այս բոպեյիս, սիրելի սժիշկ. (Սոնյային)
դնանք ինձ հետ. (գնում են):

ՏԵՍԻԼ 4 ՐԴ

ԺԵՆՅԱ ՑԵՎ ԴԱՅԱԿ

ԲԺՇԿ. ՆԻՆԱ. — (Բոնելով ժենիայի յերկու ձեռքերը և շոյելով) Այժմ սիրելիս, պատմիր դու ինձ թե ինչպե՞ս քեզ հաջողվեց ստանալ մի եղպես մեծ գումար մեր կոհսութացիան լայնացնելու համար.

ԺԵՆՅԱ. — Շատ հասարակ կերպով: Գործն առաջ սկսեցի կին ակախիլներից. ապա լիազորների ժողովում բոլորին մորիլիզավատ արի, դրանց հետ ե

իսանութային հանձնաժողովներին. նրանք արդեն
բնդհանուը ժողովում դործը յեփեցին. ևսուղ
պաշտպաննեցին պրոֆեսիոնալիստները, արդեն
ամբողջ ուժը մեր կողմն եր: Քաղխորհուրդը մի
գուցե անհարմար դրության մեջ ընկներ, սոլո
ձայնով գեմ գնար ամբողջ ժողովին և ահա նա
յել իր ձայնը միացրեց, վորովչվեց ընդհանուր
քվեյով և ձեռք բերվեց այդ գումարը, վորը կրվա-
նա և մեր կարիքները, զեռ մի բան ել իմնա ման-
կան հրապարակի և մի մսուր բանալու համար:

ԲԺՇԿ. — Ո՛, սիրելի Ժենյա, զու կատարյալ հոգի յես-
ինչ լավ կլիներ, քեզ պես շատերն ունենանք:
Դու անփոխարինելի յես:

ԺԵՆՅԱ. — Շնորհակալ եմ, Նինա Պետրովնա... Բայց
դուք պետք եւ տեսնեյիք, թե կանայք ինչպե՞ս
կպան այդ գործին: Յեթե գուք այնտեղ լինեյիք.
բոլորովին այլ հերալ կմտածեյիք և ինձ այդ չափ
չեյիք գովալ: Տեսնելով նրանց յեռանդը, աշ-
խուժը, կհամոզվեյիք, վոր, իրոք, անհատները
չեն, վոր գործ են կատարում, այլ՝ կազմակերու-
ված մասսաները, վորոնց հետ հրաշքներ կարելի
յե գործել, ի՞նչ եմ, ես իբրև անհատ:

ԲԺՇԿ. . Ն. — Այդ յես դիտե՛մ, սիրելի Ժենյա, այս՝
կազմակերպված մասսան ե, վոր իր ուսերի վրա
տանում ե խորհրդային ահուելի շինարարությու-
նը և նա յե, վոր այսոր սոցիալիզմ ե կառուցում.
բայց չե՞, վոր նրա դարձերակը քեզ պես վորե-
վորված, մինչև կոկորդո աշխատանքի մեջ խրբ-
մած անհատներն են—մեր սիրելի Ժենյաները:
Այժմ սիրելիս, ինձ ներիր, այնտեղ այցելուներն
սպասում են.

ԺԵՆՅԱ. — Ա՛յս, Նինա ջան, գնացե՛ք, խնդրե՛մ, բայց
դուք մուանում եք նաեւ ասել ձեր մասին, չե՞ վոր
դուք ել պակաս չեք. մեր կոնսուլտացիան ձեր
ուսերի վրա յե աարդում. ցտեսություն. բայց
խնդրեմ դայակին մի բովեյով ուղարկել ինձ մոտ:

ԲԺՇԿ. . Ն. — Շնորհակալ եմ. ցտեսություն. այս բովե-
յիս կուղարկեմ նրան. (գնում ե)

ՏԵՍԻԼ 5 ՐԴ

ԺԵՆՅԱ ՄԵՆԱԿ

ԺԵՆՅԱ.—(Բժշկուհու յետևից նայելով). Հրաշալի
կի՞ն...Վոչ միայն կոնսուլտացիայի վարիչ ե,
այլ մի թանկագին դանձ, բայց քանի՞ քանի նման
ընդունակ և կարող եյականեր կյանքում կորչում
են անհայտության մեջ, ինչպես աննշան հյուլե-
ների, կարելի կլինի՞ արդյոք, ժամանակի ընթաց-
քում կյանքի կոչել այդպիսիներին, ասպարեզ
իջեցնելու հանուն բանվորագյուղացիության
կյանքի բարգավաճման։ Ո՞... դժբաղդ եյակ-
ներ, յերեսի նրանք վոչինչ չեն իմանում և այն-
պես անհետանում, կորչում են և իրանք ել չեն ի-
մանում։ (Մոտենաւմ ե լուսամուտին և նայում
դեպի դուրս։ Ներս ե մտնում Դայակը)։

ՏԻՍԻԼ 6-ՐԴ

ԺԵՆՅԱ ՅԵՎ ԴԱՅԱԿ

ԴԱՅԱԿ.—(Ներս մտնելով և կառկածանենով նայելով
Ժենյայի յերեսին) Ի՞նչ կա, սիրելիս, ինչո՞ւ
տիրել ես, ի՞նչ պատահեց անուշ-ջան։

ԺԵՆՅԱ.—Վոչինչ, հենց այնպես, զգացվեցի։

ԴԱՅԱԿ.—Ժենիչկա-ջան, դու իրավունք չունես տիրե-
լու, այդ քեզ չի սազում, դու համառ կամք և ու-
ժեղ վճռականություն ունես...Հրամայի՛ր,
ի՞նչ պիտի անեմ։ զգացվելու ժամանակը չե։

ԺԵՆՅԱ.—Այո՛, սիրելիս, գործ, գործ ե պետք, ապա
նայիր այս լուսամուտից։

ԴԱՅԱԿ.—(Մոտենալով և քրիը կպցնելով ապակուն)
Նայում եմ, բայց վոչինչ չեմ տեսնում։ Ի՞նչ կա
այնտեղ։

ԺԵՆՅԱ.—Ումն ե այս այգին։

ԴԱՅԱԿ.—Այն հարուստ աղաներին։

ԺԵՆՅԱ.—Իսկ ո՞ւմ յերեխաներին եյիր այստեղ զրա-
սեցնում։

ԴԱՅԱԿ. — Իհամըկե աղաների, յես նրանց յերեք յերե-
խաներին դայակություն եյի անում:

ԺԵՆՅԱ. — Բայց քու Պետիկն այստեղ հեջ զբոսնե՞լ ե.

ԴԱՅԱԿ. — Ի՞նչ ես ասում ժենյա ջան, իմ Պետիկն այտ-
տեղ միայն բատրակություն եր անում. բայց
գու ինձ խոմ չե՞ս հանդիմանիլ:

ԺԵՆՅԱ. — Վո՛չվո՛չ, յես քեզանից մի խորհուրդ եմ
հարցնում, լավ կլինի՞, վոր այստեղ հանդիսա-
վոր կերպով մի լավ մանկական հրաշարակ բա-
ցենք:

ԴԱՅԱԿ. — (Հիացմունքով) Ո՞... հրաշալի, բայց դուք
ճի՞շտ եք ասում, յե՞րբ պիտի բանաք. իսկ փո՛ղ,
դրա համար, ունե՞ք:

ԺԵՆՅԱ. — Փո՞ղ... արդե՛ն, արդեն, ա՞յ, գրպանումս եւ
(ձեռքով խփում ե գրպանին):

ԴԱՅԱԿ. — (Ուրախացած) ճի՞շտ, այո՞, բայց յես կառ-
կածում եյի. իսկ վո՞րոեղից կարողացաք ճարել
այդպիսի մեծ զումար:

ԺԵՆՅԱ. — Ես չեմ ճարել, այլ ձեռք բերեցին հենց ի-
րանք, բիրիները... յերեխաներին խտրացին ու
հայդա, քշեցին: Մի կտոր պոկեցին ֆարկոմից,
մի պատառ քաղլսորհզից, իսկ կոոպերատվին ել
հո մերն ե, մի բան ել նրանից պոկեցին, և ահա,
գումարը պատրաստ ե:

ԴԱՅԱԿ. — Ապրե՛ս, սիրելիս, հիմա տես թե յերեխեքն
ինչքա՞ն պիտի ուրախանան, իսկ մայրերը հո,
ինչքան պիտի շնորհակալ լինեն քեզանից.

ԺԵՆՅԱ. — Դե յես քեզ ասում եմ, վոր բիրիներն են ձեռք
բերել:

ԴԱՅԱԿ. — Դուք շատ համեստ եք ժենյա ջան, ո՛, ինչ-
քան սիրում եմ քեզ (գրկում ե նրան):

ԺԵՆՅԱ. — (Ազատվելով գրկից) Նո՞ւ, լավ, գործի մա-
սին մտածենք, այժմ գու ինձ ողնիր, թե ինչ պի-
տի անենք.

ԴԱՅԱԿ. — Ի՞նչ, այս բոպեյիս. ամենից առաջ մուզիկ.
յերկրորդ՝ յերեխաների համար պատրաստու-
թյուն մի լավ հյուրասիրելու, յերրորդը՝ հան-

դես, ակրոբատ, յերեկոյան զրոսանք, այգին
լուսավառել զույնզգույն լապտերներով. յես դը-
րանից բավական գտել եմ չարդախում: Մենք
ավելի լավ կղարդարենք, քան իրանք, այգու
խաղելինները, վոր յերբեմն անում եյին իրանց
տոներին:

ԺԵՆՅԱ.—Շատ լավ, տեսա՞ր, վոր քո խորհուրդներով
ինձ մեծ ոգնություն արիր.

ԴԱՅԱԿ.—Մենք յերկուսով միասին սարեր կկանգնեց-
նենք, հրաշքներ կգործենք:

ՏԵՍԻԼ 7-ՐԴ

ՆՐԱՆՔ ՑԵՎ ՀԱՄԲՈ

ՀԱՄԲՈ.—(Անմահուր լարերով փաքաքած ձեռքը՝ տ-
րագ ներս մտնելով) Վո՞րտեղ ե Սոնյան, վորտեղ
ե իմ յերեխան: (Ժենյան և Դայակը կասկածան-
ենով հետ ու հետ են զնում, Համբոն ուղղվում ե
դեպի ընդունարանի դուռը) Տվե՞ք իմ յերեխին:
ՍՈՆՅԱ.—(Յերկալով ընդունարանի դռան մեջ). Ա.
մա՞ն, ոգնեցե՞ք նա ինձ կսպանի:

ԺԵՆՅԱ.—(Սրափիելով, փակում ե նրա առաջը) Հի-
մարություն մի անի, յես քեզ քաղաքավարի կեր-
պով խնդրում եմ:

ՀԱՄԲՈ.—Դե՛, յես քեզ... (Պատրաստվելով հարձակ-
ման)

ԺԵՆՅԱ.—Դու ուզում ես, վոր միլիցիայի՞ն դանգահա-
եմ. (արագ վերցնում ե տրուքիան, Համբոն տա-
րակուսանենով շվարում, կանգնում ե տեղում):

ԴԱՅԱԿ.—Ախր ինչո՞ւմն ե բանը, Համբարձում յեղբայր,
ինձ ասա, մի գուցե մի ճանապարհ, միջոց գըտ-
նում ենք առանց բուռնցքի, դրանով վոչ մի ո-
գուտ չես տանի, քո քրիստոնեյական ուսմունքը
բաս վո՞րտեղ ե մնացել.

ՀԱՄԲՈ.—Այ քիրըս, ախըր յես ի՞նչ անեմ, յերե-
խես դենք տարան, տունս ինպես ե անտեր մնա-
ցել, բաս ըսենց տնաքանողություն կլնի՞, հալա
ողով ել վախեցնում են: Հլա ըստեղ մի ձեռիս ել

մտիկ արա՞՞, եղ անզգամ կնիկը շանթել ա (ձեռքը
ցույց ե տալիս):

ԺԵՆՅԱ.—Հանցավոր ես և դրա համար ել սպառնում
են:

ԴԱՅԱԿ.—Մենք կարող ենք հաշտությամբ վերջացնել
այդ խնդիրը, սիրելի ժենյա: Հիմա բժիշկը քն-
նում ե յերեխային, արդեն ընդունում են, տեղ
կտան, և թող միասին վերադառնան մարդ ու կին
իրանց տուն:

ՍՈՆՅԱ.—(բանալով ընդունարանի դուռը) Յես տուն
գնացողը չեմ, մինչև չդրվի կոոպերատիվի ան-
դամ:

ՀԱՄԲՈ.—Դու ել քու կոոպերատիվի անդամությունով
ջհանդամը գնացեք.

ՍՈՆՅԱ.—(Նորից դուռը բանալով) Զե՞ս գրվի, չեմ
դալ, առանց քեզ կդանեմ գլուխս վեր գնելու տեղ:

ՀԱՄԲՈ.—Ինչ արած, եստեղ քու քոմադները շատ են,
կխոսեմ քեզ հետ, յերբ մենակ կդտնեմ. (ուզում
ի գնալ):

ԴԱՅԱԿ.—Ընկե՞ր Համբարձում, սպասի՞ր, թող բժիշկը
ձեռքդ մտիկ տա, դե ցավում ե չե՞ս, յես դիտեմ.

ՀԱՄԲՈ.—(Թշնամաքար) Կորեք, ուադ ելեք խառնակիչ-
ներ, (Դայակը վախեցած հետ ու հետ ե ֆաշ-
վում):

ԺԵՆՅԱ.—Ի՞նչ եք կոպտություն անում.

ՀԱՄԲՈ.—Բաս ի՞նչ, միլիցա յես կանչո՞ւմ. (բարկա-
ցած դուրս ե գնում, դուռը յետևից պինդ խփելով
շեմքին):

ԺԵՆՅԱ.—Կամակոր վերին աստիճանի: Սոնյան արդա-
րացի յե, նրա տուն գնալը վտանգավոր ե:

ՏԵՍԻԼ ՑՐԴ

ՆՐԱՆՔ, ԲԺՇԿՈՒՀԻ ՅԵՎ ՍՈՆՅԱ

ԲԺՇԿՈՒՀԻ.—(Դուրս գալով ընդունարանից, նրա հե-
տևից Սոնյան): Յես ենտեղ վախեցա և դեռ հի-
մա ել չեմ հանգստանում.

ԴԱՑԱԿ. — Հազար յե՞ս, կատարյալ վախվորեցի, բայց
ժենյան իրան ցույց եր տալիս հերոսի նման:

ՍՈՆՅԱԿ. — Սկզբում յես ել վախեցա, բայց հիշելով, վոր
դուք (Դայակին) եստեղ եք, վոչինչ, ել չվախե-
ցա (հպվում ե ժենյային, վերջինս նրան գըր-
կում ե):

ԺԵՆՅԱԿ. — Լավ, բավական ե այդ մասին, (դառնալով
բժշկուհուն) նինա Պետրովնա, այժմ ասացեք,
ինչպե՞ս ե յերեխայի դրությունը:

ԲԺՇԿՈՒՀԻ. — Պետք ե յենթադրել, վոր հիվանդու-
թյունն սկսվել ե աղիքների փասուածումով, և
վերջացել թունավորությամբ, յերեխային այս
յերեք որը խմեցրել են ինչ վոր նրա որդանիզմնե-
րին վնասակար յուղ:

ԺԵՆՅԱԿ. — (Հանկարծ հիշելով) Ա՛... սպասե՞ք բժիշկ,
որվա՛կը, յես խլեցի վհուկ պառավի ձեռքից,
յերբ նա խմեցնում եր յերեխային: Պառավին յես
հանձնեցի միլիցիային, իսկ դեղն այս բոպեյիս.
(դուրս ե վագում)

ՍՈՆՅԱԿ. — Յես ել, յես ել տեսա թե նա վոնց դեղը
լցնում եր յերեխուս բերանը, ո՞... յես սարսա-
փում եմ նրանից, իսկ իմ սմուսինս նրանով,
մինչև իսկ դաշլաքի ձեռքով ուզում եր յերեխիս
բժշկել: Յես տեսա, թե ինչպես նշտարը ձեռին,
ուզում եր շանթել յերեխիս թեր՝ արյուն առնե-
լու համար: Ինչպե՞ս ժամանակին հասա և աղատեցի:

ԲԺՇԿՈՒՀԻ. — (Ապշած) Մարդասպաններ, պետք ե դը-
րանց չեղոքացնել.

ԺԵՆՅԱԿ. — (Ներս ե վագում սրվակը ձեռքին, հանձնելով
բժշկուհուն, վորին առնելով, սկսում ե նայել),
Բժիշկ, ի՞նչ ե դա...

ԲԺՇԿՈՒՀԻ. — Այս արդեն փաստացի ապացույց ե, բա-
ցի յուղից, սրա հետ խառնված ե ինչ վոր վար-
դագույն հեղուկ, վոր կանաչի մեջ այնքան նկա-
տելի չե: Այս բոպեյիս դժվար ե ստուգել, բայց
յես կտամ անալիք անելու: Նու, սիրելի Ժենյա,
այս գործը չպիտի թողնել առանց հետեւանքի

Սոնյան պատմեց նաև սափրիչի մասին, վոր ուղցել և նշտարով ծակել յերեխայի թեր, արյուն առնելու, նման զեպքում մահը բոսկյական կլիներ: Դուք պետք եւ հանձն առնեք վհուկին և սափրիչին դատի ատալու նեղությունը, վորպեսզի վերջ տրվի դրանց զազրելի արտքքներին:

ՄՈՒՅԱԼ.—Իմ դրացի Մարիամը և նրա ամուսին Գրիգորն ել վկա կլինեն, նրանք ել իրենց յերեխային սկզբից տվել են Ֆալչու ձեռքը բժշկելու, բայց չուտ են խմացել և բժշկի հրավիրել. նրանք ինձ խորհուրդ տվին դալ Ժենյայի մոտ և նրա ոգնությունը խնդրել:

ԺԵՆՅԱԼ.—(Համեկարծ նայելով ժամացույցին) Ա՛խ, ներեցե՞ք, ուշացել եմ, յես պիտի վազեմ, ցտեսություն, մնաք բարեւ, սիրելի Նինա Պետրովինա. (անդմում է ձեռքը):

ՄՈՒՅԱԼ.—Իսկ ի՞նչ կլինի իմ դրությունը, յերբ դուք գնում եք.

ԺԵՆՅԱԼ.—Գնա՞նք, սիրելիս, գնանք վորոշենք այդ հարցը: (Դայակին) Մնաս բարեւ թանկաղինս.

ԴԱՅԱԿ.—ԶԵ՞՝, չե՞՝, ինչ մնաս բարեւ. ասացեք ցտեսություն, դրկախառնվում են, համբուրվում, (գընում են բոլորը):

(Վարագույր)

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նորից կոշկակար Համբոյի տունը, բայց այս անգամ խիստ անկարդ դրության մեջ: Մահճակալը խառնված, վերմակը վայր ընկած հատակին, այս ու այն կողմ կեղտոտ ամանեներ, կաթսա, կճուն, ամանեղեն, սեղանի վրա անլվա բաժակներ, խառնի խուռը, ավելն ընկած ննջարանի մեջ տեղում: Նույն դրության մեջ եւ արհեստանոցը, հեշտայեռը դռան յետեռում դրած, տրուբան վրան:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԵՆԱԿ

ՀԱՄԲՈ.—(Ներքնավարտիկով, կիսահազնված, ձեռքը
բերև կապած, մերք ննջարանն ե մտնում, նա-
յում չորս կողմի անկարգությանը, շվարած, ու-
սերը վեր բաշում, մերք արհեստանոցը։ Մոտե-
նում ե, մահնակալի վրայից վերցնում անդրա-
վարտիկը, ուզում ե հագնել, ճագը պատոված
ե)։ Ես ել եստեղ ե պատոված։ Ի՞նչ անեմ, պետք ե
կարել (մոտենում ե դազգյահին, վերցնում ե կոշ-
կակարի տանդ, հասու, դեղին, մուռած քելով)՝
Զանը՛մ, տանդ թելն ել ա պակասել ես տանից,
դիմ խառնվել ա իրար. (կարում ե վատ)։ ԶԻ՞նի
ախպե՛ր, տղամարդը իրան բանին պետք ա լինի,
կնիկը՝ իրան. յես կարկատան անող ե՛մ. (անց-
նում ե մի անկյուն հագնում, մոտենում ե սեղա-
նին, ուզում ե դասավորել, մի տփս վայր ե ընկ-
նում, կոտրվում)։ Ախպե՛ր, ինչքան հավաքում
եմ, ելի թառած թափած ա՛, (մոտենում ե հեշ-
տայեռին, փչում ե խողովակից, հետո վերցը-
նում նայում ե) Հանդել ա՛, թո՛ւհ, (կոշիկի
նոտքով բորբում ե)։ Բան դուրս չի գա. (պահա-
րանից հանում ե պրիմուս, դնում ե սեղանի վրա,
սկսում ե «կաշատ» անել, բայց իգուր)։ ԶԵ՛, դը-
րուստ են տանը, առանց ողլուշաղի տունը քանդ-
ված ա. յես վո՞ր մեկն անեմ, ըստեղ տունը յուշ
չի դնում, ենտեղ ել արհեստը, չե՛, պետք ա մտա-
ծել, բալքի Սոնին հետ բերենք, թե չե իմ բանը
խարար կլինի։ Տունս կքանդվի։ (Դուրը քըլի-
կացնում են)։

ՏԵՍԻԼ 2-ՐԴ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵԵՎ ՈՒՀԱՆ

ՀՈՄԲՈ.—Են ով ա՛, (մոտենալով ու դուռը բանալով).
ՈՒՀԱՆ.—(Ներս մտնելով ու չորս կողմք նայելով)

Աղա՛, որը ճաշ աղառել հալա դու եղ որին ե՞ս,
ես ի՞նչ ատանդ հալը, ո՞ւր ասանամեր Սոնեն.

ՀԱՄԲՈ.—Գոռ ու ջհանդամում, յեսիմ ո՞ւր ա, ուղ ա
ելել գնացել ա՛:

ՈՒՀԱՆ.—Հալա մի բարի լի՛ս ասենք. հետո, վոնց թե
ուղ ա ելել գնացել:

ՀԱՄԲՈ.—Ասսու բարին, քավոր ջան: Դե գնացել =
ելի՞...

ՈՒՀԱՆ.—Յանի ախըր վո՞նց, ո՞ւր ա գնացել. ուանդ
ոռուշցդ լավ բան չեմ գուշակում, ասա տեսնենք.

ՀԱՄԲՈ.—Ել ի՞նչ գուշակես, են ա դուրս արի—գնաց.

ՈՒՀԱՆ.—(Ապշած) Վո՞նց թե, հախով նոքար եյիր
բռնե՞լ, վոր դուրս արի՞ր: Ի՞նչ պատճառով, ինչ
տեսար նրանից, վոր դուրս արիր:

ՀԱՄԲՈ.—Էսկի բան ել չեմ տեսել.

ՈՒՀԱՆ.—Աղա՛, դու սարսադ ե՞ս. (Կողմ) սա ել, կա-
մես, բռնող բաց թողնողներից բան ա' սարվել
հա՛. (իրան) ախըր պատճառը...

ՀԱՄԲՈ.—Պատճառն են ա՛, վոր երեխուն ուզում եր
տալ կանսուլտացին, իմ ել թասիրը չտվեց, դուրս
արի: Յես ուզում եյի հեքիմով բժշկել, չհամա-
ձայնվեց:

ՈՒՀԱՆ.—Յանի վո՞նց հեքիմով, ի՞նչ հեքիմ.

ՀԱՄԲՈ.—Ա՛յ, դալլաք Արթունը, հեքիմ Լուսոն. բաս
ի՞նչ անեյի, քավոր ջան, թողայի, վոր տանեն
են կոնսուլտացեն, մեռոնահան անեն, անաստված
դարձնե՞ն:

ՈՒՀԱՆ.—(Ծիծապից հետ գնալով) Ա՛յ վողորմելի, դու
ել հերու չե մեկելտարվա իմ խելքին ե՞ս.

ՀԱՄԲՈ.—Յանի վոնց հերու չե մեկել տարվա խելքեդ:

ՈՒՀԱՆ.—Ա՛յ տունդ չքանդվի, իսանը, վոր խելք ու-
նենա, կթողա բժիշկը, գիտությունը, լուսավո-
րությունը, կոռպերատիվը, կոնսուլտացեն, կե-
թա դալլաք—դուլլուքի, Փալլումալչու, յես ինչ
գիտեմ եղակես խառա-խուռա մարդկանց թուշ
կլնի՞: Ախըր եղ դալլաք Արթունը իմ ախորըը
սպանեց. հերու չե մեկել տարին, եղ քավթառ

վհուկը, եղ ձձում նստող պառավը իմ Գորդինիս
են «Սուրբ Ջրով» ինչ վոր ծոցին ա' պահում, ենե,
սպանում եր, վոնց վոր մի սուրբ հոգի ինձ ասի',
Ուհա'ն, վեր կալ երեխուուշ տար կոնսուլտացեն,
հենց վերնեմ ու յալլա, տարա բժշկուհու մոտ,
քննեց, ասավ յերեխիդ թունավորել են: Քու
արեն եմ ասում, հինգ որվա մեջ ենպես բժշկեց,
վոր հիմի վոնց վոր մի թոփի գյուլլա: Խելքէ
արի, խելքի...ա'յ խելքիդ աղ անեմ. (դուռը
քրթխացնում են):

ՏԵՍԻԼ 3-ՐԴ

ՆՐԱՆՔ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՃԱԽՈՐԴ.

ՀԱՃԱԽ.—(Ներս և մտնում մի կին) Վարպետ, շուտ
կոչիկներս տվեք. չա՛տ եմ շտապում, տեղ պետք
ե գնամ:

ՀԱՄԲ.—Պատրաստ չի.

ՀԱՃ.—Ինչպե՞ս, ուրեմն առանց կոշի՞կի, են ել այսո՞ր,
մանկական հրապարակի բացման ո՞րը, ուր հան-
գեսի յենք հրավիրված բոլոր անդամուհիներս:

ՀԱՄԲ.—Ինչ արած, տեսնո՞ւմ ես, ձեռքս վիրավոր և
չեմ կարողանում աշխատել:

ՀԱՃ.—Մի՞թե կարելի յե, չե՞ վոր դուք խոստացաք յեր-
կու որից հետո տալ.

ՈՒՀԱՆ.—Բան չկա, տիկին, սանահորս բանը ուրիշ ա'
հանգամանք ա' պատահել, կներես.

ՀԱՃ.—Ինչպե՞ս, ի՞նչ հանգամանք դժբախտությո՞ւն
բայց ախըր իմ...

ՈՒՀԱՆ.—Համարյա թե եղանակ մի բան, տիկին, կներես.

ՀԱՃ—(Հետաքրքրվելով).—Ինչ դժբախտություն, ցա-
վում եմ. (դուռը ծեծում են):

ՀԱՄԲ.—Համեցեք ներս.

ՏԵՍԻԼ 4-ՐԴ

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՅԵՐԿՈՒ ԿԻՆ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

ՄԻԿԻ! ՅԵԿՈՂՆ.—Վարպետ, իմ հոսիկներս պատրաստ են.

ՀԱՄԲՈ.—(Ճնշվելով) Վոչ, տիկին, ներեցեք.

I ՀԱՅԱԽ.—(Նորեկներին) .—Իմոնքն ել պատրաստ չեն .
են ել եսոր, մանկական հրապարակի բացումն ե .
ՆՈՐԵԿՆԵՐ.—Հենց մենք ել հրավիրված ենք ենտեղ .
շտապում ենք, հապա ի՞նչպես կլինի :

I ՀԱՅ.—Տեսնո՞ւմ եք. ձեռքը վիրավորված ե . յերեխ դա-
նակով կարել ե , և ասում ե ինչ վոր դժբախտու-
թյուն ե պատահել .

ՆՈՐԵԿՆԵՐ.—Եղ ել մեր բազգից, ի՞նչ դժբախտու-
թյուն, մի գուցե մեկը մահացե՞լ ե .

ՈՒՀԱՆ.—(Ճնշվելով) Յանի տիկիններ, ուզում եմ ա-
սել, բայց սանահերս պետք ա ամանչի . համա
պետք ա ասեմ, ուզում ա' թող նեղանա . վոր եղ
իրատ ըլնի իրան : Դժբախտությունն են ա', վոր
ես մարդը կնոջը գուրս տ արել, հիմի ինքն ել շաղ-
վել մնացել ա', դե տունն առանց ողլուշաղի ի՞նչ
կինի, ձեռքն ել եղակես :

ԿԱՆԱՅՔ ՄԻԱՅ .—Այս', այս', կինն ե տան կառավարի-
չը . բայց ինչո՞ւ, ի՞նչն եր պատճա՞ռը .

ՈՒՀԱՆ.—Լսկի', անհամաձայնություն, կինն ասել ա-
երեխուս կոնսուլտացիա պիտի տանեմ, (Համբո-
յին) սա ել հակառակել ա', տանից գուրս ա արել .

ԿԱՆԱՅՔ .—(Կողմահարվելով) Այ քեզ անխելք բան . ի՞նչ
պատճառով, ի՞նչու չի թողել կոնսուլտացիա տա-
նի, յերեխ անդամ չի՞ .

ՈՒՀԱՆ.—Անդամությունը դեն կենա, խելքին փչել են
թե ենտեղ մեսոնից հանում են, անաստված են
դարձնում .

ԿԱՆԱՅՔ .—(Միասին խիստ ծիծաղելով) Հա', հա', հա',
հա' . . . (Հեգմելով Համբոյին) անաստված են
դարձնո՞ւմ . եղ ինչպե՞ս ե, վոր քու աստվածդդ
երեխուդ չլավացրեց .

ՀԱՄԲ .—Մեր մեղքի պատճառով չի լավացնի, իհարկե :
ԿԱՆԱՅՔ ՄԻԱՅ .—(Ծիծաղ) Հա', հա', հա', մեղքի պատ-
ճառով . . .

I ՀԱՅ .—Վարպետ, մի՞թե դուք այդչափ հետամնաց եք .
այսինքն դեռ նախալաշարված վիճակում, կոռ-
պերատիվը, կոնսուլտացիան ի՞նչ կապ ունեն քու .
մեռոնի ու աստծու հետ .

ՀԱՄԲՈ. — Հիմի յես տերտերին ու գեղի պաշտոնի հարուստներին չհավատամ, ձեղ հավատա՞մ.

ԿԱՆԱՅՔ. — (Նորից միասին) Հա՛, Հա՛, Հա՛ տերտերին, պաշտոնիքին, այսինքն կուլակներին. Հա՛, Հա՛, Հա՛.) Համբոն ամոքահար զլուխը կախում ե:

II ՀԱՃԱԽ. — Լավ որի հհասնես, վոր տարվել ես տերտերին ու կուլակներին.

ՈՒՀԱՆ. — Ախրը եդ եմ ասում ե՞... տեսնո՞ւմ ես, տունը մի կողմից ա՛ քանդվում, իրա գործն եղակես ահետ ընկել, վոր ձեր կոչիկները պատրաստ չեն, կինն ել մյուս կողմից ա հեռացել. ել տնաքանդությունը վո՞նց կլնի:

I ՀԱՃԱԽ. — Զե՛, վաբակո (Համբոյին), այժմ նրանց վարին անցել ե. մենք ել առաջ քեղ պես եյինք մը-տածում և կուլակներին ու տերտերներին եյինք լը-սում, քանի դնում, աղքատանում, թշվառանում եյինք, այժմ մենք լսում ենք մեր Խորհրդային իշխանության խորհուրդներին և մեր վիճակով, մեր յերեխաններով, մեր տնտեսությամբ շատ յերջանիկ ենք.

III ՀԱՃԱԽ. — Կոռոյերացիան մեր կյանքի զարկերակն ե. մենք, իհարկե, նրա չնորհիվ ազատվել ենք կուլակների ու սպեկուլյանուների ձեռքից:

II ՀԱՃԱԽ. — Իսկ մեր յերեխանները աճում, զարգանում են կոնսուլտացիայի խնամքի տակ.

ՈՒՀԱՆ. — Դե ի՞նչ արած, մի վախտ յես ել Համբարձումի պես եյի մտածում, ու դժբախտությունը մեզանից պակաս չեր. բայց հիմա շատ լավ ենք. իմ յերեխես քիչ մնաց Փալչիները սպանեյին. տվի կոնսուլտացին, առողջացրին. հիմա մանկապարտեղում ենակես ճըրլում, ինպես վոտանավորներ ա ասում, վոր ել ի՞նչ ասեմ:

I ՀԱՃԱԽ. — Յերեկի ուստի շրջապատը վատ ե յեղել. պետք ե շրջապատը փոխել, հասկացնող չի յեղել:

ՈՒՀԱՆ. — Դե հրես բոլորս զնամիշ արինք, թող հասկանա իլլի՞.

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ. — (Յերեքը միասին) Մենք ուշանում

ենք, հիմա հանդեսը կոկովի, (դրսից լավում և
մոտեցող մուզիկայի ձայնը): Հը՛ր', դ՛մ, շտագե-
ցեք. արդեն ոկավում ե. (Համբարձումին) խոր-
հուրդ կտանք չլսել տերտերներին, թե չե գործդ
վառ կանցնի. բայց կոշիկներս շուտ պատրաստիր,
(գնում են):

ՈՒՀԱՆ. — Խելքի արի, բալա՛մ, խելքի', կնոջդ բեր տուն,
երեխեղ ել թող մնա կոնսուլտացեն. դու հո ցարի
ժամանակումը չե՞ս ապրում, ես ինչ ժամանակ
ա, մնաս բարին. յես ել եմ գնում ենտեղ. (գը-
նում ե):

ՀԱՄԲՈ. — (Պառլամ: Տեղում շվարած, արձանացած
կանգնել ե, եետո սրափվելով) Հը՛ր', Համբո',
ա՛յ, Համբո գլուխդ իստակ դղում ա՛, (մատով
գլխին խփելով). բա յե՛ս վորտեղ եմ, ե՛ս կնա-
նիքը՝ վորտեղ, ինչքա՞ն զարգացել են. Ուհանն
ել, քավոր Ուհանն ել, նա ել զարգացել ա՛. (մու-
զիկը անցնում է լուսամուտի տակով. Համբոն
սրափվում ե և վագում դեպի լուսամուտը):
Պա՛հ, պա՛հ, ինչքա՞ն ժողովուրդ ա՛ դնում. ինչ-
քա՞ն յերեխեք, կնանիք, յերիտասարդնե՛ր: (Հետ
ե դառնում մտածելով) Համբո', հիմի դու յես խե-
լոքը, թե՞ս ես ամբողջ ժողովուրդը: Սրանք, ես
մուզիկով գնացող մախլուխն ա՛ խելոք, թե են պի-
անից տերտերը, են կեղտոտ դալլաքը, են քաֆ-
թառ լուսոն. իմ տունը քանդեցին, յես ախմախ եմ
ելել, յես դղում եմ, կատարյալ դղո՛ւմ, ափոն'ս,
ափսոս իմ Սոնիչկան: Նա ճիշտ եր, նա խելոք եր:
Յես եմ հիմարը, պետք ե կանչեմ, բերեմ, նե-
րողություն խնդրեմ: (Վագում ե դեպի լուսա-
մուտը, հանկարծ տեսավ մեկին, կանչում ե).
Ալմա՛ստ, Ալմա՛ստ քույրիկ, խնդրում եմ մի ներս
արի:

ԴՐՍԻՑ. — Հը՛ր', յեղբայր Համբարձում, ի՞նչ կա'.

ՀԱՄԲՈ. — Արի', արի', քույր-ջան, արի բան եմ ասում:

ՀԱՄԱԱՐՁՈՒՄ ՑԵՎ ԴԱՅԱԿ

ԴԱՅԱԿ.—(Ներս և գալիս տոնական հագուստով) Բարեն, յեղբայր ջան.

ՀԱՄԲ.—(Մոտենալով և ձեռքը սեղմելով) Հազար բարի քույր-ջան: Ների՛ր ինձ, հազար ներողություն. են որը յես ձեզ շատ վիրավորեցի, ներեցեք ինձ, դուն ել, ժենյան ել, բժշկուհին ել, Սոնյան ել, բոլորդ, բոլորդ, ներեցե՛ք:

ԴԱՅԱԿ.—(ապշած և մի կողմից ուրախացած) Հեղաւըլո՞ւմ, հեղափոխությո՞ւն, եղ ինչպես յեղագագա՞ս յեղբայր ջան. վերջապես, խելքի՞ր յեկա՞ր, (շուրջը նայելով, ապա վարագույրից նայելով ննջարանին): Ես ի՞նչ ա' քու հալդ, ա՞յ, տեղն աքեզ. մի՞թե Սոնյան, են անմեղը վատ կնիկ ե՞ր.

ՀԱՄԲ.—Զե՞, չե՞, Ալմաստ քույրիկ, չե՞; Սոնյան մեղավոր չի. յես եմ, յես եմ ախմախը, կոպիտը, գուռակը. յես, վոր լսեցի տերտերի, Փալչու, դալլաքի, են հաստափոր կուլակներին և ահա տունս քանդվում ա: Խնդրում եմ ինձ հաշտեցնես Սոնյայիս հետ. ասա դրածդ տունը քանդվում ա', թող գա, թող գա. ել թե վոր եսպես մի չըթմով (մասերը շարծելով) իսկեմ, ինձ քարկոծեցե՛ք, դատի տվեք:

ԴԱՅԱԿ.—Բա վոր ասում եյի՞, ես երկորվա մեջ յերեխեն ենպես լավացել ա', վոր ինչ ասեմ, թունավորել եյին, երկորից հետո պիտի մեռներ, իսկ Սոնին արգեն ծառայություն են տվել, հենց կոնսուլտացումը, ամիսը 30 մանեթով:

ՀԱՄԲՈ.—(Ցնցվելով զարմանեմից, երմվանեմից) ԵԵ-ռե՛սո՞ւն մանե՞թ... ա՞յ թէ ինչ լավ ե, կեցցե մեր Խորհրդային իշխանությունը, թող ծառայի, յես ավելի ուրախ եմ: (Լուսամուտը ծեծում են, Համբոն և Դայակը միասին մոտենաւմ են. ապակու յետևից յերեսում են ժենյայի և Սոնյայի դեմքերը. վերջինս գրկած ունի իր յերեխային):

ԴԱՅԱԿ.—(Բարձր) Սոնյա՛, Ժենյա՛, սիրելիներս, յեկեղեք ներս... (Վերջինները վարանում են շարժվել: Դայակը ազմուկով դուրս ե վազում, Համբոն ձեռքերը տրորելով, ամոքահար սենյակում պտույտներ ե անում.

ՏԵՍԻԼ ԵՐԴ

ՆՐԱՆՔ ԲՈՒՈՐԸ ՄԻԱՍԻՆ,

ԴԱՅԱԿ.—(Ցերեքը միասին ներս գալով) Հիմա տե՛ս, տե՛ս Ժորժիկիդ, Համբարձում, տես վոնց լավացել ե.

ՀԱՄԲՈՆ.—(Մոտենալով բռնում ե Ժենյայի ձեռքը) Ների՛ր, ընկեր Ժենյա, ների՛ր, յես մեղավոր եմ, (ապա Սոնյային) դուն ե՛լ, Սոնյա ջան, ների՛ր, յես մեղավոր եմ քո և բոլորիդ առաջ, յես սիսալվել եմ, յես չեմ հասկացել, խարված եմ յեղել. այժմ ամեն բան ինձ համար պարզ ե:

ԺԵՆԵԱ.—(Հանգստացնելով և ձեռքը նրա ուսին դընելով) Այո՛, յես գիտեյի, վոր այդպել ել կլինի. բոլո՛րը, բոլո՛րը, վորոնք քեզ պես են մտածել ու դատել, վերջում քեզ պես ելի զղացել են, այժմ յերեխադ ել առողջ ե, կինդ ել պաշտոնի: Մի՞թէ Սոնյան վաստ կին ե, նա ամենալավ կինն ե և խելոք մտածող, նա յեթե չլիներ, քու յերեխադ հիմա մեռել եր.

ԴԱՅԱԿ.—Այո՛, այո՛, հարկավոր և Համբարձումին մի լավ ծեծել (կամաց խփում ե յերկու ապտակ՝ մեկ աջ, մեկ ձախ յերեխին) Ա՞յ, ա՞յ, ել կծեծե՞ս Սոնիչկին:

ՀԱՄԲՈՆ.—(Ուրախ) Զե՛, չե՛, Ալմաստ ջան, ել են Համբոն մեռավ, եիմի նոր Համբարձում եմ յես, հետո կտեսնեք ինձ, (Սոնյային) տո՛ւր, տո՛ւր Ժորժիկիս մի տեսնե՞մ, (առնում ե գիրկը, համբուրում), բալիկս, ի՞նչ փոփոխություն, բոլորովին առողջացել ե. (համձնում ե մոքը. մոտենալով Ժենյային) Ժենյա՛, մի խնդիր ունեմ քեզ, աղաչում եմ.

ԺԵՆՅԱԼ.—Ասացե՞ք, ինչ վոր հնարավոր ե կարվի.
ՀԱՄԲ.—Խնդրում եմ ինձ կոռպերատիվի անդամ գրեք.
ԺԵՆՅԱԼ.—Այդ եր խնդիրդ. ապահով յեղիք, վաղը կը-
գաս կոռպերատիվի գրասենյակը, յես կկարգա-
դրեմ: Դե', ուշացանք, գնանք, մենք այնտեղ
գործ ունենք.

ՍՈՆՅԱԼ.—Գնանք, (նայելով բնակարանի չորս կողմբ)
Տունս քանդվել ե, ես ի՞նչ ոյին ե յեկել.

ՀԱՄԲ.—Արի', արի' Սոնյա ջան. քանդված տունս չե-
նի, արի', յես քեզ միշտ ել սիրել եմ.

ԴԱՅԱԿ.—Ապա՞ , ապա՞ , մի համբուրվեցե՞ք, հաշտվե-
ցե՞ք, չո՛ւտ (յերկուսին բաշելով իրար մոտ):

ՍՈՆՅԱԼ.—(Ամաչելով) Ե՛ . Ալմա՛ստ ջան, հանաքներդ մի
կողմ դիր. (հետ ե բաշվում).

ՀԱՄԲՈՌ.—(Մոտենալով և գրկում ե կնոջը) Ըհը',
ըհը', դե՛ , (համբուրում ե) սրտովդ ելա՞վ. (ծի-
ծալ):


ԴԱՅԱԿ.—Դե', այժմ դնա՛նք, (յերեքով շարժվում են
դեպի դուռը. բայց դայակը նորից հետ ե գալիս,
Համբոն շվարած կանգնած ե) Բաս դու, ընկեր
Համբարձում,—ինչո՞ւ յես կանգնել, ինչո՞ւ չես
դալիս մեզ հետ.


ՀԱՄԲ.—(Շվարած) ՅԵ՞ս, յես ել դա՞մ:

ԴԱՅԱԿ.—(Բոթելով նրա ականջից և բաշ տալով դեպի
դուռը) Ա՞յ, եսպես ականջիցդ բոնած քաշ կտամ
դեպի կոնսուլտացիա մանկական հրապարակ,
գնա՛նք միասին: (Գնում են Համբարձումի ական-
ջից բռնած տանելով):

(Վարագույր)









(204.)

A II
34270

ԳԻՒԸ 5 ԿՈՄ.